

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ԸՆԿԵՐ ՍԱՆԺԵԵՎԻՆ

Հարգելի ընկեր Սանժեն:

Ձեր նամակին պատասխանում եմ մեծ ուշացումով, որովհետև Ձեր նամակը միայն երեկ հանձնեցին ինձ Կենտկոմի ապարատից:

Դուրս, անկասկած, ճիշտ եմ մեկնաբանում իմ դիրքը բարբառների հարցում:

«Դասակարգային» բարբառները, որոնք ավելի ճիշտ կլինեին անվանել ժարգոններ, սպասարկում են ոչ թե ժողովրդական մասսաներին, այլ սոցիալական մի նեղ վերնախավի: Բացի այդ, դրանք չունեն իրենց սեփական բերականական կառուցվածքը և հիմնական բառաբանային ֆոնդը: Այդ պատճառով էլ դրանք ո՛չ մի կերպ չեն կարող զարգանալ և դառնալ ինֆնուրյուն լեզուներ:

Տեղական («տերիտորիալ») բարբառները, ընդհակառակը, սպասարկում են ժողովրդական մասսաներին և ունեն իրենց բերականական կառուցվածքն ու հիմնական բառաբանային ֆոնդը: Այդ պատճառով էլ տեղական որոշ բարբառներ ազգերի գոյացման պրոցեսում կարող են ազգային լեզուների հիմք հանդիսանալ և զարգանալ ու դառնալ ազգային ինֆնուրյուն լեզուներ: Այդպես է եղել, օրինակ, ռուսերեն լեզվի կուրսկ-օրյոլյան բարբառի (կուրսկ-օրյոլյան «խոսվածք») հետ, որը դարձավ ռուսերեն ազգային լեզվի հիմքը: Նույնը պետք է ասել ուկրաիներեն լեզվի պոլտավյան-կիեյան բարբառի մասին, որը դարձավ ուկրաինական ազգային լեզվի հիմքը: Ինչ վերաբերում է այդպիսի լեզուների մնացած բարբառներին, ապա դրանք կոչվում են իրենց ինֆնուրյունակությունը, ձուլվում են այդ լեզուներին և անհետանում դրանց մեջ:

Ինչում են և հակառակ պրոցեսներ, երբ զարգացման անհրաժեշտ տնտեսական պայմանների բացակայության հետևանքով, դեռևս ազգ չդարձած ազգության միասնական լեզուն, այդ ազգության պետական ֆայֆայման հետևանքով, կրախի է մատնվում, իսկ տեղական բարբառները, որոնք դեռևս չեն կարողացել միաձուլվել միասնական լեզվի մեջ,— վերակենդանանում են և սկիզբ են դնում առանձին ինֆնուրյուն լեզուների գոյացմանը: Հնարավոր է, որ հենց այդպես է եղել, օրինակ, մոնղոլերեն միասնական լեզվի հետ:

Ի. ՍՏԱՆԻՆ

ԸՆԿԵՐՆԵՐ Դ. ԲԵԼԿԻՆԻՆ ԵՎ Ս. ՖՈԻՐԵՐԻՆ

Ձեր նամակներն ստացել եմ:

Ձեր սխալն այն է, որ դուք շփոթել եք երկու տարբեր բաներ և ընկ. Կրաշենինիկովային իմ տված պատասխանի մեջ ֆենարկվող առարկան փոխարինել եք մի այլ առարկայով:

1. Ես այդ պատասխանի մեջ ֆենադատում եմ Ն. Յա. Մաոին, որը խոսելով լեզվի (հնչյունային) և մտածողության մասին, լեզուն անջատում է մտածողությունից և այդպիսով ընկնում է իդեալիզմի մեջ: Հետևաբար, իմ պատասխանի մեջ խոսքը վերաբերում է լեզվին տիրապետող նորմալ մարդկանց: Ըստ որում, ես պնդում եմ, որ մտքերը այդպիսի մարդկանց մոտ կարող են ծագել միայն լեզվական նյութի բազայի վրա, որ լեզվական նյութի հետ չկապված մերկ մտքեր լեզվին տիրապետող մարդկանց մոտ գոյություն չունեն:

Փոխանակ ընդունելու կամ մերժելու այս դրույթը, դուք մեջտեղ եք բերում մտավորապես խանգարված, անլեզու մարդկանց, խուլունամբերին, որոնք լեզու չունեն և որոնց մտքերը, իհարկե, չեն կարող ծագել լեզվական նյութի բազայի վրա: Ինչպես տեսնում եք, սա միանգամայն այլ բեմա է, որը ես չեմ շոշափել և չեի կարող շոշափել, քանի որ լեզվաբանությունը զբաղվում է լեզվին տիրապետող նորմալ մարդկանցով, այլ ոչ թե լեզու չունեցող, մտավորապես խանգարված, խուլունամբ մարդկանցով:

Դուք ֆենարկվող բեման փոխարինել եք մի այլ բեմայով, որը չի ֆենարկվել:

2. Ընկ. Բելկինի նամակից երևում է, որ նա հավասարեցնում է «բառերի լեզուն» (հնչյունային լեզուն) և «ժեստերի լեզուն» (ըստ Ն. Յա. Մաոի՝ «ձեռք» — լեզուն): Ըստ երևույթին հա կարծում է, որ ժեստերի լեզուն և բառերի լեզուն հավասարագոր են, որ մի ժամանակ մարդկային հասարակությունը չի ունեցել բառերի լեզու, որ այդ ժամանակ «ձեռք» — լեզուն փոխարինում էր հետագայում երևան եկած բառերի լեզվին:

Բայց եթե իսկապես ընկ. Բելկինը այսպես է մտածում, ապա նա լուրջ սխալ է թույլ տալիս: Հնչյունային լեզուն, կամ բառերի լեզուն միշտ էլ եղել է մարդկային հասարակության միակ լեզուն, որն ընդունակ է ծառայել որպես մարդկանց հաղորդակցման լիարժեք միջոց: Պատմությունը չգիտե որևէ մարդկային հասարակություն, թեկուզ նա ամենահետամնացը լինի, որը չունենար իր հնչյունային լեզուն: Ազգագրությունը չգիտե որևէ հետամնաց փոքր ժողովուրդ, թեկուզ նա լինի նույնպիսին, կամ դեռևս է՛լ ավելի նախնադարյան, քան, ասենք, անցյալ դարի ավստրալիացիները կամ հրդեհակրիները, որը չունենա իր հնչյունային լեզուն: Հնչյունային լեզուն մարդկության պատմության մեջ մեկն է այն ուժերից, որոնք օգնել են մարդկանց՝ անջատվելու կենդանական աշխարհից, միավորվելու հասարակությունների մեջ, զարգացնելու իրենց մտածողությունը, կազմակերպելու հասարակական արտադրությունը, հաջող պայքար մղելու բնության ուժերի դեմ և հասնելու այն պրոգրեսին, որն ունենք մենք ներկայումս:

Այս տեսակետից այսպես կոչված ժեստերի լեզվի նշանակությունը, նրա ծայրահեղ աղֆատության և սահմանափակվածության պատճառով, չնչին է: Դա, իսկապես, ոչ թե լեզու է և նույնիսկ ոչ թե լեզվի սուբրոդատ, որը կարող է այսպես թե այնպես փոխարինել հնչյունային լեզվին, այլ ծայրահեղորեն սահ-

մանափակ միջոցներ ունեցող օժանդակ միջոց, որով երբեմն օգտվում է մարդը իր խոսքի մեջ այս կամ այն մոմենտը ընդգծելու համար: Ժեստերի լեզուն նույնպես չի կարելի հավասարեցնել հնչյունային լեզվին, ինչպես որ նախնադարյան փայտե բրիչը չի կարելի հավասարեցնել հինգխոփանի ժամանակակից բրբուրավոր տրակտորին և տրակտորային շարժացանին:

3. Ինչպես երևում է, դուրս ամենից առաջ հետաքրքրվում եմ խոլուրմամբերով, իսկ հետո արդեն լեզվաբանության պրոբլեմներով: Ըստ երևույթին, հենց այդ հանգամանքն էլ ձեզ ստիպել է ինձ դիմել մի շարք հարցերով: Ի՞նչ արած, երբ դուրս պնդում եմ, ես դեմ չեմ բավարարելու ձեր խնդրանքը: Ուրեմն ինչպե՞ս վերաբերվել խոլուրմամբերի հարցին: Գործում է արդյո՞ք նրանց մտածողությունը. ծագո՞ւմ են արդյո՞ք մտքեր: Այո՞, նրանց մտածողությունը գործում է, մտքեր ծագում են: Պարզ է, ֆանի որ խոլուրմամբերը զուրկ են լեզվից, նրանց մտքերը չեն կարող ծագել լեզվական նյութի բազայի վրա: Այդ չի՞ նշանակում, արդյո՞ք, որ խոլուրմամբերի մտքերը մերկ են, կապված չեն «բնության նորմաների» (Ն. Յա. Մառի արտահայտությունը) հետ: Ո՛չ, չի նշանակում: Խոլուրմամբերի մտքերը ծագում են և կարող են գոյություն ունենալ միայն այն պատկերների, ընկալումների, պատկերացումների բազայի վրա, որոնք նրանց մոտ ստեղծվում են կենցաղում արտաքին աշխարհի առարկաների և դրանց միջև եղած փոխհարաբերությունների վերաբերյալ՝ տեսողության, շոշափելիի, հաշակելիի, հոտոտելիի զգայարանների շնորհիվ: Այս պատկերներից, ընկալումներից, պատկերացումներից դուրս միտքը դատարկ է, զուրկ ուրեք բովանդակությունից, այսինքն նա գոյություն չունի:

Ի. ՍՏԱԼԻՆ

22 հուլիսի 1950 թ.

ԸՆԿԵՐ Ա. ԽՈԼՈՊՈՎԻՆ

Ձեր նամակն ստացել եմ:

Պատասխանը մի փոքր ուշացրի աշխատանքով ծանրաբեռնված լինելու պատճառով:

Ձեր նամակը լույսայն ելնում է երկու ենթադրություններից՝ այն ենթադրությունից, թե բուլլատելի է այս կամ այն հեղինակի աշխատությունից մեջբերում կատարել այն պատմական ժամանակաշրջանից կտրված, որի մասին խոսում է ֆաղվածքը և, երկրորդ, այն ենթադրությունից, թե մարքսիզմի այս կամ այն հետևություններն ու ֆորմուլաները, որոնք ստացվել են պատմական զարգացման ժամանակաշրջաններից մեկի ուսումնասիրման շնորհիվ, հիշտ են զարգացման բոլոր ժամանակաշրջանների համար և այդ պատճառով էլ պետք է մնան անփոփոխ:

Պետք է ասեմ, որ այդ երկու ենթադրություններն էլ խորապես սխալ են:

Մի ֆանի օրինակ:

1. Անցյալ դարի ֆառասնական քվականներին, երբ դեռ չկար մոնոպոլիստական կապիտալիզմը, երբ կապիտալիզմը ավելի կամ պակաս սահուն կերպով զարգանում էր վերընթաց գծով, տարածվելով նոր, դեռևս իր կողմից չզրավված տերիտորիաներում, իսկ զարգացման անհավասարաչափության օրենքները դեռ չէր կարող գործել լիակատար ուժով, — Մարքսը և էնգելսը հանգե-

ցին այն հետևությանը, որ սոցիալիստական ռևոլյուցիան չի կարող հաղթել որևէ մեկ երկրում, որ նա կարող է հաղթել միայն ընդհանուր հաղթածի հետևանքով բոլոր ֆաղափակրված երկրներում, կամ նրանց մեծ մասում: Այս հետևությունը հետագայում ղեկավար դրույր դարձավ բոլոր մարքսիստների համար:

Սակայն XX դարի սկզբում, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, երբ բոլորի համար պարզ դարձավ, որ մինչ մոնոպոլիստական կապիտալիզմը ակնհայտորեն վերահել է մոնոպոլիստական կապիտալիզմի, երբ վերընթաց կապիտալիզմը վերածվեց մեռնող կապիտալիզմի. երբ պատերազմը բացահայտեց համաշխարհային իմպերիալիստական հակառակ անբուժելի բուլությունները, իսկ զարգացման անհավասարաչափության օրենքը կանխորոշեց տարբեր երկրներում պրոլետարական ռևոլյուցիայի տարածմանակ հասունացումը,— Լենինը, ելնելով մարքսիստական բեռիայից, հանգեց այն հետևությանը, որ զարգացման նոր պայմաններում սոցիալիստական ռևոլյուցիան կարող է լիովին հաղթանակել մեկ, առանձին վերցրած երկրում, որ սոցիալիստական ռևոլյուցիայի միաժամանակյա հաղթանակը բոլոր երկրներում, կամ ֆաղափակրված երկրների մեծ մասում անհնար է՝ այդ երկրներում ռևոլյուցիայի անհավասարաչափ հասունացման պատճառով, որ Մարքսի և Էնգելսի հին ֆորմուլան արդեն չի համապատասխանում պատմական նոր պայմաններին:

Ինչպես երևում է, մենք այստեղ սոցիալիզմի հաղթանակի հարցի մասին ունենք երկու տարբեր հետևություններ, որոնք ոչ միայն իրար հակասում են, այլ միմյանց բացառում են:

Ինչ-որ տիրացուներ ու քալմուդիստներ, որոնք, խորամուխ չլինելով գործի էությանը, մեջբերում են կատարում ձևականորեն, պատմական պայմաններից կտրված,— կարող են ասել, որ այդ հետևություններից մեկը, իբրև անպայմանորեն սխալ, պետք է դեն նետվի, իսկ մյուս հետևությունը, որպես անպայմանորեն ճիշտ, պետք է տարածվի զարգացման բոլոր ժամանակաշրջանների վրա: Բայց մարքսիստները չեն կարող չիմանալ, որ տիրացուներն ու քալմուդիստները սխալվում են, նրանք չեն կարող չիմանալ, որ այդ երկու հետևություններն էլ ճիշտ են, բայց ոչ թե անպայմանորեն, այլ յուրաքանչյուրն իր ժամանակի համար. Մարքսի և Էնգելսի հետևությունը՝ մինչմոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանի համար, իսկ Լենինի հետևությունը՝ մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանի համար:

2. Էնգելսն իր «Անտի-Պյուրիզմ»-ում ասել է, որ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո պետությունը պետք է մահանա: Այս հիման վրա, մեր երկրում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո մեր պարտիայում եղած տիրացուներն ու քալմուդիստները սկսեցին պահանջել, որպեսզի պարտիան միջոցներ ձեռք առնի մեր պետությունը ամենաարագ կերպով մահացնելու, պետական օրգանները արձակելու, մշտական բանակից հրաժարվելու համար: Սակայն սովետական մարքսիստները, մեր ժամանակի համաշխարհային իրադրության ուսումնասիրման հիման վրա հանգեցին այն հետևությանը, որ կապիտալիստական շրջապատման առկայության դեպքում, երբ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը տեղի ունի միայն մեկ երկրում, իսկ մյուս բոլոր երկրներում տիրապետում է կապիտալիզմը, հաղթանակած ռևոլյուցիայի երկիրը պետք է ոչ թե բուլացնի, այլ ամեն կերպ ուժեղացնի իր

պետությունը, պետության օրգանները, հետախուզության օրգանները, բանակը, երե այդ երկիրը չի ուզում ջախջախված լինել կապիտալիստական շրջապատման կողմից: Ռուս մարքսիստները նանգեցին այն հետևությանը, որ էնգելսի ֆորմուլան նկատի ունի սոցիալիզմի հաղթանակը բոլոր երկրներում, կամ երկրների մեծ մասում, որ դա կիրառելի չէ այն դեպքում, երբ սոցիալիզմը հաղթանակում է մեկ, առանձին վերցրած երկրում, իսկ մյուս բոլոր երկրներում տիրապետում է կապիտալիզմը:

Ինչպես երևում է, մենք սոցիալիստական պետության նակատագրի հարցի վերաբերյալ այստեղ ունենք Լեկու տարբեր ֆորմուլաներ, որոնք իրար բացառում են:

Տիրացուներն ու քալմուդիստները կարող են ասել, որ այդ հանգամանքը անհանդուրժելի դրություն է ստեղծում, որ հարկավոր է ֆորմուլաներից մեկը, որպես անպայմանորեն սխալ, դեն շարտել, իսկ մյուսը, որպես անպայմանորեն նիշտ, տարածել սոցիալիստական պետության զարգացման բոլոր ժամանակաշրջանների վրա: Բայց մարքսիստները չեն կարող չիմանալ, որ տիրացուներն ու քալմուդիստները սխալվում են, քանի որ այդ երկու ֆորմուլաներն էլ նիշտ են, բայց ոչ թե բացառականապես, այլ յուրաքանչյուրը իր ժամանակի համար՝ սովետական մարքսիստների ֆորմուլան՝ մեկ կամ մի քանի երկրներում սոցիալիզմի հաղթանակի ժամանակաշրջանի համար, իսկ էնգելսի ֆորմուլան՝ այն ժամանակաշրջանի համար, երբ առանձին երկրներում սոցիալիզմի հետևողական հաղթանակը կհանգեցնի սոցիալիզմի հաղթանակին երկրների մեծ մասում և երբ, այդպիսով, անհրաժեշտ պայմաններ կստեղծվեն էնգելսի ֆորմուլան կիրառելու համար:

Այսպիսի օրինակների թիվը կարելի էր ավելացնել:

Նույնը պետք է ասել լեզվի հարցի վերաբերյալ այն երկու տարբեր ֆորմուլաների մասին, որոնք վերցվել են Ստալինի տարբեր աշխատություններից և ընկ. Խոլոպովի կողմից մեջ են բերվել իր նամակում:

Ընկ. Խոլոպովը վկայակոչում է Ստալինի «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» աշխատությունը, որտեղ հետևություն է արվում, որ ասենք, երկու լեզուների խաչաձևման հետևանքով լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս, իսկ մյուսը մեռնում է, որ, հետևաբար, խաչաձևումը տալիս է ոչ թե ինչ որ նոր՝ երրորդ լեզու, այլ պահպանում է լեզուներից մեկը: Այնուհետև նա վկայակոչում է մի այլ հետևություն, որը վերցրել է Համկ(բ)Պ 16-րդ համագումարում Ստալինի տված զեկուցումից, որտեղ ասվում է, որ համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի հաղթանակի ժամանակաշրջանում, երբ սոցիալիզմը կամրապնդվի և կմտնի կենցաղի մեջ, ազգային լեզուներն անխուսափելիորեն պետք է ձուլվեն մեկ ընդհանուր լեզվի մեջ, որը, իհարկե, չի լինի ո՛չ վելիկո-ռուսական, ո՛չ գերմանական, այլ ինչ որ նոր լեզու: Համեմատելով այս երկու ֆորմուլաները և տեսնելով, որ դրանք ոչ միայն իրար չեն համընկնում, այլ իրար բացառում են, ընկ. Խոլոպովը հուսահատության մեջ է ընկնում: «Ձեր հոդվածից, գրում է նա նամակում, ես հասկացա, որ լեզուների խաչաձևումից երբեք չի կարող ստացվել որևէ նոր լեզու, իսկ մինչև հոդվածը, Համկ(բ)Պ 16-րդ համագումարում ունեցած Ձեր ելույթի համաձայն, հաստատ հավատացած էի, որ կ ո մ ու ն ի զ մ ի օրոք լեզուները կը-ձուլվեն մեկ ընդհանուր լեզվի մեջ:

Ակներև է, որ ընկ. Խոլոպովը, հակասություն հսկանագործելով այդ երկու ֆորմուլաների միջև և խորապես հավատալով, որ հակասությունը պետք է վերացվի, հարկ է համարում ազատվել այդ ֆորմուլաներից մեկից, որպես սխալ ֆորմուլայի, և կառչել մյուս ֆորմուլային, որպես բոլոր ժամանակների ու երկրների համար ճիշտ ֆորմուլայի, բայց թե հատկապես որ ֆորմուլային կառչել, նա չգիտի: Ստացվում է անելանելի դրության նման մի բան: Ընկ. Խոլոպովը չի էլ կոահում, որ երկու ֆորմուլաներն էլ կարող են ճիշտ լինել,-- յուրաքանչյուրը իր ժամանակի համար:

Այսպես է միշտ լինում տիրացուների և քալմուդիստների հետ, որոնք խորամուխ չլինելով գործի էությանը և մեջբերում կատարելով ձևականորեն, անկախ այն պատմական պայմաններից, որոնց մասին խոսում են մեջբերումները, շարունակ ընկնում են անելանելի դրության մեջ:

Մինչդեռ, եթե հարցը ֆենարկենֆ ըստ էության, ոչ մի հիմք չկա անելանելի դրության մեջ ընկնելու համար: Բանն այն է, որ Ստալինի «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» բրոշյուրը և Ստալինի էլույրը պարտիայի 16-րդ համագումարում նկատի ունեն երկու, միանգամայն տարբեր էպոխաներ, որի հետևանքով ֆորմուլաներն էլ տարբեր են ստացվում:

Ստալինի ֆորմուլան նրա բրոշյուրի այն մասում, որը վերաբերում է լեզուների խաչաձևմանը, նկատի ունի համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի հաղթանակից առաջ ընկած էպոխան, երբ շահագործող դասակարգերը աշխարհում տիրապետող ուժ են հանդիսանում, երբ ազգային ու գաղութային ճնշումը մնում է ուժի մեջ, երբ ազգային մեկուսացումը և ազգերի փոխադարձ անվստահությունը ամրապնդված են տարբեր պետականությամբ, երբ դեռևս չկա ազգային իրավահավասարություն, երբ լեզուների խաչաձևումը տեղի է ունենում լեզուներից մեկի տիրապետության համար մղվող պայքարի կարգով, երբ դեռևս պայմաններ չկան ազգերի և լեզուների խաղաղ ու բարեկամական համագործակցության համար, երբ հերթի է դրված ոչ թե լեզուների համագործակցությունն ու փոխադարձ հարստացումը, այլ որոշ լեզուների ասիմիլացիան և մյուս լեզուների հաղթանակը: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում կարող են լինել միայն հաղթանակած և պարտված լեզուներ: Հենց այս պայմանները նկատի ունի Ստալինի ֆորմուլան, երբ այն ասում է, որ դիցուք, երկու լեզուների խաչաձևման հետևանքով ոչ թե նոր լեզու է գոյանում, այլ լեզուներից մեկը հաղթում է, իսկ մյուսը՝ պարտվում:

Իսկ ինչ վերաբերում է Ստալինի մյուս ֆորմուլային, որը վերցված է պարտիայի 16-րդ համագումարում նրա էլույրի այն մասից, որ վերաբերում է լեզուների միաձուլմանը մեկ ընդհանուր լեզվի մեջ, ապա այստեղ նկատի է առնված մի այլ էպոխա, այն է՝ համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի հաղթանակից հետո ընկած էպոխան, երբ համաշխարհային իմպերիալիզմը արդեն առկա չի լինի, շահագործող դասակարգերը տապալված կլինեն, ազգային ու գաղութային ճնշումը վերացված կլինի, ազգային մեկուսացումը և ազգերի փոխադարձ անվստահությունը կփոխարինվեն փոխադարձ վստահությամբ և ազգերի մերձեցմամբ, ազգային իրավահավասարությունը կենսագործված կլինի, լեզուների ճնշման ու ասիմիլացիայի ֆաղափանդությունը վերացված կլինի, ազգերի համագործակցությունը կարգավորված կլինի, իսկ ազգային լեզուները կունենան համագործակցության կարգով միմյանց ազատորեն հարստացնելու հնարավորություն:

Հասկանալի է, որ այս պայմաններում խոսք անգամ չի կարող լինել որոշ լեզուների հնչման ու պարտության և մյուս լեզուների հաղթանակի մասին: Այստեղ մենք զործ կունենանք ոչ քե երկու լեզվի հետ, որոնցից մեկը պարտություն է կրում, իսկ մյուսը պայքարից հաղթանակով է դուրս գալիս, այլ հարյուրավոր ազգային լեզուների հետ, որոնցից ազգերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական երկարաժամկետ համագործակցության հետևանքով կառանձանան նախ առաջիկ հարստացած միասնական զոնալ լեզուները, իսկ հետո զոնալ լեզուները կմիաձուլվեն մեկ ընդհանուր միջազգային լեզվի մեջ, որը, իհարկե, չի լինի ո՛չ գերմաներեն, ո՛չ ռուսերեն, ո՛չ անգլերեն, այլ մի նոր լեզու, որն իր մեջ կներառնի ազգային ու զոնալ լեզուների լավագույն տարրերը:

Հետևաբար, երկու տարբեր ֆորմուլաները համապատասխանում են հասարակության զարգացման երկու տարբեր էպոխաներին, և հենց այն պատճառով, որ նրանք համապատասխանում են դրանց, երկու ֆորմուլաներն էլ ճիշտ են՝ յուրաքանչյուրը իր էպոխայի համար:

Պահանջել, որ այդ ֆորմուլաները հակասության մեջ չգտնվեն իրար հետ, որ նրանք չբացառեն միմյանց. նույնքան անհեթեթ է, որքան անհեթեթ կլինեք պահանջել, որ կապիտալիզմի տիրապետության էպոխան հակասության մեջ չգտնվեր սոցիալիզմի տիրապետության էպոխայի հետ, որ սոցիալիզմն ու կապիտալիզմը չբացառեն միմյանց:

Տիրացուներն ու քալմուդիստները մարսիզմը, մարսիզմի առանձին հետևորդություններն ու ֆորմուլաները դիտում են իբրև դոգմատների հավաքածու, որոնք «երբեք» չեն փոփոխվում, չնայած հասարակության զարգացման պայմանների փոփոխման: Նրանք կարծում են, որ երբ սերտեն այդ հետևորդություններն ու ֆորմուլաները և սկսեն դրանք ծուղումուղ մեջ բերել, ապա նրանք ի վիճակի կլինեն լուծելու ամեն մի հարց, հույս ունենալով, որ սերտած հետևորդություններն ու ֆորմուլաները նրանց պետք կգան բոլոր ժամանակների ու երկրների համար, կյանքի բոլոր դեպքերում: Բայց այսպես կարող են մտածել միմիայն այնպիսի մարդիկ, որոնք տեսնում են մարսիզմի տառը, բայց չեն տեսնում նրա էությունը, անգիր են անում մարսիզմի հետևորդությունների ու ֆորմուլաների տեքստերը, բայց չեն հասկանում դրանց բովանդակությունը:

Մարսիզմը գիտություն է բնության և հասարակության զարգացման օրենքների մասին, գիտություն հնչված և շահագործվող մասսաների ռեզուլտատի մասին, գիտություն բոլոր երկրներում սոցիալիզմի հաղթանակի մասին, գիտություն կոմունիստական հասարակարգի կառուցման մասին: Մարսիզմը որպես գիտություն չի կարող կանգնած մնալ միևնույն տեղում, — նա զարգանում է ու կատարելագործվում: Իր զարգացման մեջ մարսիզմը չի կարող ճիգստանալ նոր փորձով, նոր գիտելիքներով, — հետևաբար նրա առանձին ֆորմուլաներն ու հետևորդությունները չեն կարող ժամանակի ընթացքում չփոխվել, չեն կարող չփոխարինվել պատմական նոր խնդիրներին համապատասխանող ֆորմուլաներով ու հետևորդություններով: Մարսիզմը բոլոր էպոխաների ու ժամանակաշրջանների համար պարտադիր, անփոփոխ հետևորդություններ ու ֆորմուլաներ չի հանաչում: Մարսիզմը ամեն տեսակ դոգմատիզմի քշնամին է:

Ի. ՍՏԱԼԻՆ